ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/19» ծածկագրով գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ 14.10.2025թ. ժամը 13:00

Ք. Գյումրի Գ. Նժդեհի 3/3

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	Անահիտ Հովսեփյան
Հանձնաժողովի անդամներ՝	Լուսինե Արսենյան
	Վերգինե Թառոյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Սուսաննա Գասպարյան

Ժամը 12:00-ին գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը համարեց բացված:

- **Մրցակցության ապահովման պահանջներ ներկայացնելու մասին**

(Անահիտ Հովսեփյան)

Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլ. փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից չեն ներկայացվել

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0

- **Ընտրված մասնակիցների հայտերում հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերն առկա են և համապատասխանում են հրավերի պահանջներին,**

(Անահիտ Հովսեփյան)

բացառությամբ <<Թեոֆարմա>> և <<Պրոֆ Տեստ>> ՍՊԸ-ների ներակայացրած հայտերի:

Մասնավորապես՝

- << Թեոֆարմա >> ՍՊԸ-ի կցած հայտի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը սյունակները լրացված չեն հրավերի պահանջներին համապատասխան, ինչպես նաև հայտում բացակայում է դիմում հայտարարությունը/Հավելված1/ և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը:
- <<Պրոֆ Տեստ>> ՍՊԸ-ի կցած հայտի առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը սյունակները լրացված չեն հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0

3. Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին

(Անահիտ Հովսեփյան)

Հարցադրում 1

Հարգելի գործընկեր Խնդրում եմ պարզաբանել հետևյալ հարցերը. 1. Թիվ 2, 3, 4 և 5 չափաբաժինների տեխնիկական բնութագրերում դիալիզատորների թաղանթի արդյունավետ

մակերեսի, նյութի, լցման ծավալի և այլ ցուցանիշների նկարագրությունից հետո նշված են հետևյալ արտադրողների անվանումները <<Baxter Polyflux կամ Allmed Medical GmbH կամ Lepu Medical կամ Vital Healthcare կամ Bain Medical>>: Ձեր կողմից թվարկված արտադրողներից ոչ բոլորն են համապատասխանում Ձեր սահմանած ցուցանիշներին, օրինակ Lepu Medical դիալիզատորները չեն համապատասխանում Ձեր սահմանած ցուցանիշներին, սակայն այդ արտադրողի անվանումը ներառված է Ձեր համար ընդունելի արտադրողների շարքում: Նման հակասության դեպքում ինչ սկզբունքով եք առաջնորդվելու որոշում կայացնելիս, մասնավորապես հիմք եք ընդունելու Ձեր սահմանած ցուցանիշներին համապատասխանելիությունը, թե Ձեր նշած արտադրողների ցանկում ներառված լինելը: Եթե Ձեր սահմանած ցուցանիշներին համապատասխանելու սկզբունքով եք առաջնորդվելու, ապա էլ ինչու եք նշել մի քանի արտադրողներ, որոնք ոչ բոլորն են համապատասխանում այդ ցուցանիշներին: Եթե առաջնորդվելու եք Ձեր կողմից նշված արտադրողների ցանկում լինելու փաստով, ապա ինչու եք սահմանել այնպիսի ցուցանիշներ, որոնց Ձեր նշած ոչ բոլոր արտադրողներն են բավարարում: 2. Թիվ 1,2,3,4,5,6,7 և 8 չափաբաժիններում առկա է հետևյալ ձևակերպումը. <<Պահանջի դեպքում սերտիֆիկատի և նմուշի ներկայացում..... և նմուշը պարտադիր լինի մատակարարվող ապրանքի նույն խմբաքանակից>>: Գնումների մասին ՀՀ օրենքի որ հոդվածի կամ կառավարության որոշման որ կետի հիման վրա եք սահմանել այդ պահանջը: Որպես պատվիրատու Ձեզ տրված է հնարավորություն մանրամասն նկարագրել Ձեր կարիքին բավարարող ապրանքը, սահմանել դրա ցուցանիշները և այլն, այսինքն Ձեզ անհրաժեշտ ապրանքի բոլոր առանձնահատկությունները, այդ թվում որակին ներկայացվող պահանջները պետք է արտացոլված լինեն տեխնիկական բնութագրում և տեխնիկական բնութագրից դուրս Դուք իրավունք չունեք սահմանել այլ պահանջներ, սակայն Դուք փորձում եք հավելյալ <<սեփական սկզբունքերով մինի տենդեր>> կազմակերպել, պահանջելով նմուշներ հաղթողից: Փաստացի Դուք ցանկանում եք, որ հաղթողը, որն առաջարկել է Ձեր տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանք, ևս մեկ փուլ հաղթահարի: Դա հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը, քանի որ տեխնիկական բնութագիր կազմելու ողջ իմաստը կայանում է նրանում, որ հավասար մրցակցային պայմաններ սահմանվելու շնորհիվ բացառվի պատվիրատուի խտրական մոտեցումը, սուբյեկտիվիզմը, իսկ Ձեր կողմից նմուշներ պահանջելը դա սուբյեկտիվիզմի դրսևորում է, այսինքն Դուք ցանկանում եք անկախ մրցույթի արդյունքներից, սեփական մրցույթը կազմակերպել և օրինակի համար որոշել, որ այս կամ այն հաղթող ընկերության ներկայացրած նմուշը այս կամ այն պատճառաբանությամբ չեք ցանկանում գնել, մինչդեռ եթե Ձեր այդ պատճառաբանությունները լինեին օբյեկտիվ, ապա դրանք տեղ կգտնեին հրապարակված տեխնիկական բնութագրում և կլինեին տեսանելի բոլորին, հասկանալի բոլորի համար: Ինչի համար եք սահմանել տեխնիկական բնութագրեր, եթե մի հատ էլ նորից նմուշներ եք պահանջելու:

Պարզաբանում 1

Հարգելի հարցատու

ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/19 ծածկագրով ընթացակարգի հրավերում կկատարվեն համապատասխան ճշտումները և լրացումները: Մասնավորապես թիվ 2-5 չափաբաժինների տեխնիկական բնութագրերում կկատարվեն ճշտումներ, իսկ թիվ 1,2,3,4,5,6,7 և 8 չափաբաժիններից կհանվեն նմուշի մատակարարման պահանջները, քանի որ մատակարարը պարտավորվում է մատակարարել Baxter Polyflux կամ Allmed Medical GmbH կամ Lepu Medical կամ Vital Healthcare կամ Bain Medical կամ Baihe Medical կամ Ultrafor Medical:

Հարցադրում 3

Հրավերում որևէ տեղ նշված չէ, 2025, թե 2026 թվականի համար է մատակարարումը, սակայն հրավերի ծածկագիրը սկսվում է 26-ով (26/19), որը ենթադրաբար նշանակում է, որ 2026 թվականի համար է գնումը կատարվում: Խնդրում եմ պարզաբանել, արդյոք 2026թ.-ի համար է նախատեսվում մատակարարումը

Պարզաբանում 3

Հարգելի հարցատու

ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/19 ծածկագրով ընթացակարգի մատակարարումը նախատեսվում է 2026 թվականին: Համապատասխան փոփոխությունը կկատարվի հրավերում:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0 :

4. Ներկայացված բողոքների և դրանց վերաբերյալ կայացված որոշումների մասին

(Անահիտ Հովսեփյան)

- Բողոքներ չեն եղել

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0 :

5. Հակաօրինական գործողությունների հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին

(Անահիտ Հովսեփյան)

- Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

Առաջարկում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները և eauction.armeps.am համակարգում կցել շտկված փաստաթղթերը:

- << Թեոֆարմա >> ՍՊԸ -ին առաջարկում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ֆայլի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մասկնիշը և արտադրողի անվանումը սյունակները լրացնել հրավերի պահանջներին համապատասխան, ինչպես նաև կցել դիմում հայտարարությունը /Հավելված1/ և իրական շահառուների վերաբերյալ հայտարարգիրը:
- <<Պրոֆ Տեստ>> ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ֆայլի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մասկնիշը և արտադրողի անվանումը սյունակները լրացնել հրավերի պահանջներին համապատասխան:

Փաստաթղթերի գնահատման նպատակով նիստը տեղափոխվում է սույն թվականի հոկտեմբերի 16-ին ժամը 13:00-ին:

Հանձնաժողովի քարտուղարին ապահովել ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված և սույն նիստին ընդունված որոշումներից բխող բոլոր գործողությունները և տեղեկատվության հրապարակումը

Հանձնաժողովի նախագահ՝	Անահիտ Հովսեփյան
Հանձնաժողովի անդամներ՝	Լուսինե Արսենյան
	Վերգինե Թաղոյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Սուսաննա Գասպարյան